ԱՄԱՎԵՐՋՑԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Այս անգամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ամավերջի հանդեսը տեղի ունեցավ Վեհարանի հանդիսությունների սրահում, հունիսի 27-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ:

Գեղարվեստական հարուստ հայտագիրն սկսվեց Հայաստանի Հանրապետության հիմնով և Հոգևոր Ճեմարանի ֆայլերգով: Ապա երգչախմբի կատարմամբ հնչեց Վ. Սարգսյանի «Անդրանիկին» երգը, հավարտ որի բացման խոսք ասաց հոգեշնորհ Տ. Կարապետ աբեղա Հարությունյանը:

Հոգևոր Ճեմարանի անցած հիսնամյա ուղուն էր նվիրված Ե լսարանի սան Հարություն Հարությունյանի բովանդակալից զեկուցումը:

Ցուրահատուկ ուշադրության արժանացավ նաև Զ լսարանի սան բարեշնորհ սարկավագ Տիգրան Սանոսյանի՝ ողջ ուսանողության անունից ներկաներին ուղղված երախտիքի խոսքը:

Հոգևոր Ճեմարանի տարեկան հաշվետվության ամփոփ ներկայացմամբ հանդես եկավ տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Մ. վարդապետ Նաջարյանը: Հանգամանորեն ներկայացնելով վերջին մեկ տարում կատարված աշխատանքները ու վերափոխումները, կրթօջախի գործունեությունն ընդարձակելու ծրագրերը, ինչպես նաև դրանց իրականացման ուղիները, Հայր Սուրբն ի մասնավորի նշեց. «Հայաստանի անկախությամբ այսօր մեզ տրվել է մի բացառիկ առիթ՝ անցյալի ավելի քան 80 տարվա վնասը հեռացնելու: Հայն առանց Հայ Առաքելական Եկեղեցու ավանդությանց չի կարող գոյատևել: Մեզ մնում է վերգտնել, վերադաստիարակել մեր հարազատ ժողովրդին ճիշտ այնպես, ինչպես չորրորդ դարասկզբին Գրիգոր Լուսավորիչը սերմանեց քրիստոնեության սերմերը մեր ժողովրդի հոգու անդաստանի մեջ: Առանց Հայ Առաքելական Եկեղեցվո ավանդությունների, մեր ժողովուրդը շատ հեշտությամբ կուլ կգնա օտար աղանդներին և կրոնական հոսանքներին՝ զրկվելով իր շուրջ 1700-ամյա ստեղծված յուրահատուկ դիմագծից, որը հատուկ է միայն հայ ժողովրդին: Զգիտեմ, թե այս ազատությունն ինչքան կտևի, բայց մեր պարտքն է գինել ժողովրդին իր բնիկ հոգևոր ամրություններով, որ կարողանա դիմանալ գալիք փորձություններին:

Որպեսզի պատրաստենք նշմարիտ եկեղեցական, մենք պարտավոր ենք ընտրել միայն և միայն լավից լավը, ինչպես Աբելը զոհաբերեց իր լավագույնն Աստծուն, մենք ավելի նվազ զոհաբերություն տալու իրավունք չունենք»:

Գրական-գեղարվեստական բաժնում Ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեցին «Ով զարմանալի», «Այսօր ծայնն հայրական» շարականները, ինչպես նաև Հայդնի, Ա. Խաչատրյանի, Դ. Ղազարյանի, Մ. Եկմալյանի և Ա. Հարությունյանի ստեղծագործությունները, Հ. Թումանյանի, Դ. Վարուժանի բանաստեղծությունները: Սեփական ստեղծագործությունն ընթերցեց Գ լսարանի սան Սամվել Թորոսյանը:

ՄԻ ՊԱՀ ԱՄԱՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Հավարտ հանդիսության տեղի ունեցավ մրցանակաբաշխություն: Ուսումնական տարվա ընթացքում աչքի ընկած սաներն արժանացան տեսչության կողմից սահմանված պարգևներին:

Վերջում ամենքին իր հայրական պատգամն ու օրհնանքի խոսքը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ շեշտելով, որ օրը նշանավորվում է հատկապես երկու իրողություններով. նախ Հայոց եկեղեցին տոնախմբում է «Սրբոց թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրովպայ» անմահ հիշատակը և ապա՝ կատարում Ճեմարանի ավարտական հանդիսության ավանդական արարողությունը: Նորին Սրբությունն այդ երկու իրադարձության միմյանց զուգադիպելը նկատեց ոչ թե պատահականություն, այլ իրար կապեց մեծ խորհրդով: Հայոց Հայրապետը հաստատության սաներին պատգամեց Ս. Մեսրոպի և Ս. Սահակի արժանի հետևորդները լինել, լուսավորվել նրանց հոգիներից ճառագող լույսով և ապա լուսավորել մյուսներին: Այնուհետև ավելացրեց, որ Հոգևոր Ճեմարանի յուրաքանչյուր ուսանողի սրբազան պարտականությունն է մի փոքր այլ կերպ ընկալել *արձակուրդ* բառը: Արձակուրդ չի նշանակում մի կողմ թողնել գիր ու գրականությունն և զբաղվել միայն առտնին կյանքով: Եթե այդպես վարվեք, անշուշտ շատ բան կկորցնեք: Խորիմաստ հոգևորական դառնալու նշմարիտ գրավականը մշտատև սովորելն է, անընդհատ ընթերցելը: «Թող գիրքը դառնա ձեր մշտական ու անշահախնդիր ուղեկիցը», իր խոսքի վերջում ասաց Վեհափառ Տերը:

Հոգևոր Ճեմարանի ամավերջի հանդիսությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքի երգեցողությամբ:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ